



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԷՅԺ ԼՐԱՏՈՒ

ԻՉ. տարի

Թիւ 1

Սիրելիներ,

Կրկնակի վերամուտով սկսանք 2024-2025-ը: Անորոշութեամբ, անապահովութեամբ ու վախով պատուած օրերը անելիով զգացուցին բարոյական պարտաւորութիւնը, որ ունինք աշակերտներուն եւ անձնակազմին հանդէպ: Այդ պատճառով, հոգաբարձութեան համախորհուրդ, Սեպտեմբեր 24-էն մինչեւ Նոյեմբեր 3, դպրոցը փակ պահեցինք՝ դասաւանդութիւնները շարունակելով առցանց:

Եփեսացիներուն գրած իր նամակին մէջ Պօղոս առաքեալ մեր այս օրերուն մասին մեզի ուղղուած խօսք մը ունի. «Օգտագործեցէք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են»:

Համոզուեմ եւ, որ Տէրը կ'ուզէ, որ յատկապէս այս չար օրերուն մէջ խնդրենք իր իմաստութիւնը, որպէսզի ողջամիտ ու զգօն դատողութեամբ ծրագրենք, գործենք, եւ մեզի վստահուած պարտականութիւնը կատարենք նուազագոյնս ազդուելով արտաքին ազդակներէ, որքան ալ բարձր ըլլայ ռումբերու պայթիւնը եւ պժգալի՝ թշնամիին քամահրանքը:

Սատանան մեր մէջ է այս չար օրերուն ամենատարբեր կերպարանքներով՝ կրելով վախի, յուսահատութեան, ճարահատութեան, անձնասիրութեան, ատելութեան դիմակներ: Չթողունք, որ Չարը իշխէ մեր վրայ, որովհետեւ օր մը չէ օր մը պիտի դադրին ռումբերը, պիտի վերաշինուին տուները, պիտի մեղմանայ սուգը, բայց մեր անձերուն վրայ Չարին հետքերը կրնան յամենալ նոյնիսկ թուեցեալ խաղաղութեան մէջ, խաթարելով մեր էութիւնը, կեանքն ու յարաբերութիւնները:

ԲԱՐԵՐԱՐ ՌԱՅՏԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

**ՏԱՐԵԿԱՆ 100.000 ՏՈՒԱՐԻ
Բ. ՅԱՏԿԱՑՈՒՄԸ ՀԱԳ-ԻՆ**

ՀԱԳ-ի մեծագոյն բարերար եւ նախկին երկարամեայ աշակերտ տիար Ռաֆֆի Մանուկեան դպրոցի հարիւրամեակի իր հրապարակային խոստումին համաձայն մէկ միլիոն տոլարի իր յատկացումին երկրորդ 100.000 տոլարը փոխանցեց դպրոցին:

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք ազնիւ բարերարին:

ՀԱԳ-ը կը շնորհաւորէ իր 1971-ի շրջանաւարտ **ՍԵՐՃ Տ. ՊՈՒԶԱՔԸԵԱՆ**ը, որ ընտրուած է Ամերիկայի հայ ակետարանչական ընկերակցութեան գործադիր տնօրէն:



Հպարտ ենք մեր շրջանաւարտին ձեռքբերումներով եւ կը մաղթենք յարատեւ յաջողութիւն:

Այդ պատճառով իսկ ուսումն ու կրթութիւնը կը մնան Չարին դէմ պայքարելու լաւ միջոցներ եւ ՀԱԳ 100 եւ անելի տարիներէ ի վեր այդ պայքարին առաջամարտիկներէն է:

Խաղաղ Ամանոր ու օրինաբեր Սուրբ ծնունդ բոլորիդ:



Դուազադ Միմանդը
եւ
Օրինաբեր Սուրբ Ծնունդ
*Peaceful New Year
& Blessed Christmas
2025*

ԱՅՐ
Յոյս
Խաւարք
Երգանկութիւն
Դուազադութիւն



ՎԵՐԱՄՈՒՏ





»7 Նոյեմբեր 2024-ին դրկտ. Արմեն Իւրնէշեան առցանց մասնակցեցաւ «Արեւմտահայերէնը 21-րդ դարուն» լեզուաբանական գիտաժողովին (Երեւան), ուր ներկայացուց «Արեւմտահայերէնի կիրառութիւնը 15 - 24 տարեկան լիբանանահայերու մէջ» զեկոյցը:



Հայկական բաժանմունք



Տարեկան պատգամը

Center for Continuing Education
Haigazian University

11 Հոկտեմբեր

Trauma-Informed Teaching in Times of Crisis

Dear Schools, in these extremely challenging times, we recognize the immense pressures you face. We are here to support you with a **free informative Zoom session** on Trauma-Informed Teaching in Times of Crisis.

Sessions are available based on your schedule and are free of charge.

Instructor:
Dr. Shaghig Hudaverdian
Assistant Professor in the Department of Education at Haigazian University

To reserve your session, contact us at:

WhatsApp
+961 81 882 990

cce@haigazian.edu.lb



Թարմացուցիչ ծրագիր առցանց դասաւանդութեան ընթացքին



Լիբանանի անկախութեան օր



ԳԼԿՆԱԿՈՒՄՈՒՄԻՏԻՑԳ ԴՈՒԻ @USC



Nooreed
Համալսարանական մասնագիտական արեւելուծի ծրագիր



Սեմինար - 15 Նոյեմբեր



Երկարամտայ նախկին աշակերտ, Մծտեռնա գիտական հետազոտություններու ընկերության տեր ու տնօրէն դոկտ. Նուպար Աֆէեան, առ ի գնահատանք իր բարերարություններուն և գիտական աշխատանքին, 29 Սեպտեմբեր 2024-ին Ս. Էջմիածնի մայր տաճարին մէջ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-էն ստացաւ «Էջմիածին» բարձրագոյն շքանշանը: Իսկ 13 Հոկտեմբեր 2024-ին Պոսթոնի Ս. Ստեփանոս եկեղեցոյ սրահին մէջ Մեծի տանն կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին ի պատիւ տրուած ճաշկերոյթին, վեհափառը «Կիլիկիոյ իշխան» շքանշանով պարգևատրեց դոկտ. Աֆէեանը:

Էջմիածնի տաճարի վերածման ընթացքին Մայր տաճարի բարերարուի տիկ. Թամար Մանուկեան (1978-ի շրջ.) Ամենայն հայոց կաթողիկոսէն շքադրուեցաւ «Դուստր Ս. Էջմիածնի» շքանշանով, 29 Սեպտեմբերին:



AMAA-ի նախագահ տորթ. Նազարէթ Տարագճեան (1970-ի շրջ.), 11 Մայիս 2024-ին տեսակցած է Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրեանին հետ:



Հոլիվուտի Տաղեան մշակութային համալիրին մէջ 13 Հոկտեմբեր 2024-ին Համագայինի Արևմտեան Ամերիկայի կալա ընթրիքին տիար Ալպետ Պէգճեան (1957-ի շրջ.) և տիկինը՝ Թերրի, 500.000 տոլար նուիրած են ի յիշատակ իրենց մօր՝ Ալիս Պէգճեանի: Համագայինի նոր կեդրոնի հանդիսարանը և ցուցասրահը պիտի կոչուի այս վերջինին անունով:

ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մըրլեան (1955-ի շրջ.) 27 Յունիս 2024-ին Պէրթոբի ամերիկեան համալսարանի Էստեմայի հոլին մէջ ի շարս այլոց նախագահ դոկտ. Ֆատիօ Խուրիի կողմէ յատուկ պատուանշանով պարգևատրուեցաւ՝ իր BA ստանալուն 65-րդ և MA-ի 60-րդ տարեդարձին առթիւ: Նոյն առթիւ դպրոցի հոգաբարձութեան նախկին ատենատետուի դոկտ. Արտա Էքմէքճի ևս պատուեցաւ իր MA ստանալուն յիսնամեակին առիթով:



Ամերիկայի Նորթրիճ համալսարանի հայագիտական ուսմանց ծրագրի տնօրէն, պատմաբան դոկտ. Վահրամ Շէմնասեան (1969-ի շրջ.) 19 – 21 Սեպտեմբեր 2024-ին, Երևանի պետական համալսարանի և Փոցտամփ Լեփսիոսահաուսի հետ միատեղ կազմակերպած էր «Հայերի ցեղասպանությունը. անցեալի և ներկայի ներհայեցումներ» խորագրով միջազգային եռօրեայ գիտաժողով՝ նուիրուած աստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Միսսա լեռան քառասուն օրը» վեպի 90-ամեակին:



ՀԱԳ-ի երկարամտայ նախկին աշակերտ տորթ. Էլի Թաշճեան 10 Յուլիս 2024-ին Լիբանանահայ բժշկական միութեան ատենապետ ընտրուեցաւ Միութեան ընդհանուր ժողովին կողմէ:



30 Մայիս 2024-ին ԱՄՆ-ի Արևմտեան Ափի ՀՅԴ 58-րդ շրջանային համաժողովին տեղոյն կեդրոնական կոմիտէի անդամ ընտրուեցաւ Տարօն Տէր Խաչատուրեան (1978-ի շրջ.):



1 Օգոստոս 2024-ին Պէրթոբի Ս.Բ. Հնչակեան կուսակցութեան օրկան «Արարատ»-ի տնօրէն նշանակուեցաւ ՀԱԳ-ի նախկին աշակերտ Նազարէթ Ճերճեան:



Հեռատեսիլի և ձայնասփիւռի յայտագիրներ պատրաստող հաղորդավար Զաւէն Գոյունճեան (1987-ի շրջ.) Թեյէ Լիպան և Ժետիտ կայաններուն վրայ միատեղ հեռասփռուող «Շու Աուլար» յայտագիրը կը վարէ ամիսներէ ի վեր:



Երկարամտայ նախկին աշակերտ, AMAA-ի Գանատայի ներկայացուցիչ Յարութ Ներսէսեան 2024 Փետրուարէն Ապրիլ ամիսներուն Արցախի հայ տարագրեալներուն օգնելու հարցով խօսած է 5 հայ անտ. եկեղեցիներու և 2 ոչ-հայ եկեղեցիներու մէջ ԱՄՆի Հար. Գալիֆօրնիա, Փենսիլվենիա, Մասաչուսեց և Նիւ Ճըրզի նահանգներուն մէջ:



ՀՕՄ-ի Արևմտ. Ամերիկայի Ափի 89-րդ շրջանային պատգամատրական ժողովին, որ տեղի ունեցաւ 19-էն 21 Յուլիս 2024-ին Պըրպէնքի Հայ կեդրոնին

մէջ, շրջանային վարչութեան անդամ ընտրուած է Ռիթա Հինդլեան (1980-ի շրջ.):

Պէյրութի «Լ'օրիան լը Ժուր» օրաթերթի անգլերէն տարբերակը անուանի օտերայի մեներգչուհի Սոնա Ղազարեանի (1963-ի շրջ.) մասին գրութիւն մը հրատարակեց իր 13 Մեպտեմբերի թիւին մէջ:




Մաւետիոս Կարո Աւետեան (1998-ի շրջ.) Յունաստանի Փրեմիերա քաղաքի մէջ գրեթէ կէսդարեան միջազգային երգչախմբային մրցոյթ-փառատօսին (Յուլիս 4-7, 2024) հրահարուեցաւ իբր դատական կազմի 5 անդամներէն մին: Միջոյթին կը մասնակցէին 20 երգչախումբեր աշխարհի տարբեր երկիրներէն:



Հայաստանի «Ռուլին» արուեստի պարբերականը, իր թիւ 2/2024 համարին մէջ յօդուած մը հրատարակած է Կ. Աւետեանի անցած ճանապարհին մասին: Յօդուածագիրն է դոկտ. Աննա Ասատրեան՝ Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի արուեստի հիմնարկի տնօրէնը:

Բանաստեղծ Խաչիկ Տէտէեան (1980-ի շրջ.), ընտանեօք Թորոնթօ հաստատուելէ ետք տեղւոյն գաղութային կեանքին աշխուժ մասնակից է: Փետրուար 2024-ին խօսած է լիբանանահայ գաղութի մասին ՀՕՄ-ի «Տոհմիկ օր» ծրագրէն ներս: Օրուան հանդիսավարն էր Տիկ. Սոնիա (Ծն. Չէօքթեան) Գրաճեան (1966-ի շրջ.): Տէտէեան նաև 30 Յունիս 2024-ին ներկայացուցած է Սփիւռքի նախկին նախարար Հրանուշ Յակոբեանի եռահատորը տեղւոյն Հայ կեդրոնին մէջ, իսկ 10 Հոկտեմբեր 2024-ին սրտի խօսք ուղղած է դոկտ. Հրայր Ճեպլեանի վերջին գիրքի շտրահանդէսին:

Հայկ Մարրլեան (1960-ի շրջ.) 15 նոյեմբեր 2024ին Հովիվուտի Ալեքս Փիլիպոս դպրոցի հրաւերով նախ. Զ. դասարանի աշակերտութեան խօսած է Աւետիք Իսահակեանի «Հայաստանի բանալին հայ ազգի նուիրական լեզուն է: Սովորիր և հայրենիքին դռները բաց են» խօսքին մասին, զոր բանաստեղծը նուիրած է իրեն:



Յուլիս 15 – 17 Լիզպոնի մէջ կայացաւ «Հաւատարում նորոգ – Մերունդներու զրոյց մը» բնաբանով հանդիպում մը կազմակերպութեամբ Գալուստ Կիլիպէնկեան հիմնարկութեան: 40 մասնակիցներու շարքին էին ՀԱԳ տնօրէն դոկտ. Իւրնէշլեան, որ ելոյթ ունեցաւ «կրթութիւն» նիւթով քննարկումին, բանաստեղծ և արձակագիր Վեհանուշ Թէքեան

ԱՆԹՈՆԻ ՕՂԵՅՏ
(2020-ի շրջ.)
BA - Hotel Management - Ալ Բաֆաաթ համալսարան



ՄԻՐԵՅ ԿԻՒԼԻԴԵԱՆ
(2020-ի շրջ.)
BS - Nursing and Minor in Nutritional Sciences - Պալամանտ համալսարան



ՍԵՐՃ ԳԱՍԱԴԴԵԱՆ
(2021-ի շրջ.)
BS - Information Technology emphasis in AI Պէյրութի Ս. Ժորժ համալսարան



- Պ Ս Ա Վ**
- Մարինա Քէշիշեան (2014-ի շրջ.) պսակուեցաւ Յարութ Տէօրիպեանի հետ, 21 Մեպտեմբեր 2024-ին Ս. Նշան մայր եկեղեցոյ մէջ, Պէյրութ:
 - Նանօր Փափիագեան (2013-ի շրջ.) պսակուեցաւ Անդրանիկ Մելքոնեանի հետ, 10 Օգոստոս 2024-ին Ս. Նշան մայր եկեղեցոյ մէջ, Պէյրութ:
 - Կասիա Հաճեքեան (2015-ի շրջ.) պսակուեցաւ Մուշեղ Պզգիկեանի հետ, 3 Օգոստոս 2024-ին Արթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, Արթիլիաս:



(1966-ի շրջ.), որուն հետ կայացաւ հարցազրոյց՝ իր գրական-հասարակական գործունէութեան մասին, իսկ Շուշան Քէշիշեան (2015-ի շրջ.) «Սփիւռքը՝ երիտասարդներու աչքով» նիւթի քննարկումին հիմնական զեկուցողներէն էր:

4 Նոյեմբեր 2024-ին Հարաւային Գալիֆօրնիոյ համալսարանի (USC) Հայկական ուսմանց Տոնասայֆ հիմնարկին մէջ կազմակերպուած է սիմփոզիում մը “Artsakh Uprooted: Aftermaths of Displacement” խորագրով, ուր Շուշան Քէշիշեան այս անգամ մասնակցած է «Վերսկսելով» քննարկումին: Այդ առթիւ շրջանին մէջ բնակող կարգ մը շրջանաւարտներ հանդիպում մը ունեցած են:

ԻՐԵՆՑ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ՄՏԱՆ...



† ՀԱԳ-ի Հոգաբարձության 1977-80 և 1982-1989 տարիներու արեւնապետ **Հրայր Մուրադեան** (ծն. 1932), Լոս Անճելոսի մէջ մահացաւ 18 Նոյեմբեր 2024-ին:




† ՀԱԳ-ի նախկին աշակերտուհի տիկ. **Մարալ (ծն. Խաչատուրեան) Զօպանեան** (ծն. 1961) 1 Նոյեմբեր 2024-ին, յետ անողորմ հիւանդութեան մահացած է Լոս Անճելոսի մէջ:



† Պէրոութի ամերիկեան համալսարանի հիւանդանոցի երկար տարիներու նախկին սննդագէտ **Տոնալտ Պապիկեան** (ծն. 1966), յանկարծամահ եղաւ 15 Հոկտեմբեր 2024-ին, Պէրոութի մէջ:




† 1975 – 1977 ՀԱԳ-ի նախկին հոգաբարձու տիկ. **Սիրվարդ Ապաճեան** (ծն. 1930) խոր տարիքին 15 Սեպտեմբեր 2024-ին մահացաւ Լոս Անճելոսի մէջ:



† Պէրոութի ամերիկեան համալսարանի և Պոսթընի հիւանդանոցի Ռարիտոլոճիի բաժնի նախկին պարասիսանարու և Հարվըրդ համալսարանի բժշկական նախկին դասախօս, 1945-ի շրջանաւարտ փոքր. **Ժիրայր Պալիքեան** (ծն. 1927) խոր ծերութեան մահացաւ Պոստընի մէջ 13 Սեպտեմբեր 2024-ին:



† ՀԱԳ-ի թուաբանութեան նախկին ուսուցչուհի (1962-63, 1966-67 և 1974-76) տիկ. **Անահիտ (ծն. Խանճեան) Թերճիմանեան** (ծն. 1939), 16 Ապրիլ 2024-ին մահացաւ, Մոնթեպելոյի (ԱՄՆ) մէջ:



† 1954-ի շրջանաւարտ փոքր. **Արա Քէթենճեան** (ծն. 1937) յետ երկարատեւ հիւանդութեան մահացաւ 22 Մայիս 2024-ին, ԱՄՆ-ի մէջ:



† AMAA News-էն յապաղումով տեղեկացանք, որ երկարամեայ նախկին աշակերտ **Գրիգոր Թերզեան** (ծն. 1956), մահացած է 1 Դեկտեմբեր 2024-ին Լոս Անճելոսի Վան Նայսի շրջանին մէջ:



† 28 Հոկտեմբեր 2024-ին, Ֆրանսայի մէջ մահացած է տիկ. **Թերեզ Սարգիսեան (ծն. Սարժի)**, որ Ֆրանսերէնի այցելու ուսուցիչ էր ՀԱԳ-ի մէջ 1968-1976-ին:



† Նախկին աշակերտ **Միեր Շնրհոբեան** (ծն. 1949) 16 Օգոստոս 2024-ին Լոս Անճելոսի մէջ մահացաւ յետ անողորմ հիւանդութեան:



† Հանգուցեալին եղբայրը՝ նախկին աշակերտ **Վիգէն Շնրհոբեան** (ծն. 1960) անսկնկալօրէն մահացաւ 24 Նոյեմբեր 2024-ին:



† 1963-ի շրջանաւարտ **Պօղոս (Փօլ) Քենտիրճեան** (ծն. 1938), յետ երկարատեւ հիւանդութեան մահացաւ 10 Օգոստոս 2024-ին, Այնճարի մէջ:



† 1978-ի շրջանաւարտուհի **Տիկ. Նուր (ծն. Գէորգեան) Մոնճեան** (ծն. 1959) մահացած է 21 Օգոստոս 2024-ին Պէրոութի մէջ:



† 1955-ի շրջանաւարտ **Արամ Գոյումճեան** 3 Դեկտեմբեր 2024-ին մահացած է Լոնսոնի մէջ:



ՀԱԳ-ի աշակերտուրիները կը տօնէ Կաղանդը



ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիվն է վեր շնորհակալությամբ ստացուած են հետևեալ նուիրատուութիւնները:
Բոլոր գումարները կանխիկ տոլարով են, բացի եթէ նշուած է այլապէս:

ՏԻԱՐ ՈԱՅՅԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ \$13,475

AMAA-ԷՆ

Դպրոցի բարելավման ծրագիրներուն	8000
Փիլիպոսեան ֆոնտ	7709
Անմիջական յատկացում (2023-24) (Դ.)	4818
Կրթական յատկացում (2023-24) (Դ.)	2700
2024-25 Ա. եռամսեակի յատկացում	750
Անմիջական յատկացում (Ա.)	4473

AMAA-Ի ՄԻԶՈՑՈՎ

Լիբանանի պատերազմին դպրոցի կարիքներուն ...

Շրջանաւարտուհի տիկ. Արփի Սարեան	1000
---------------------------------	------

ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՈՐԲ. ԼՈՐԵԹ ԱՐԱՊԵԱՆ - ԹԱՊԵԹԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շրջանաւարտ տղոք. Արմէն Կեօնճեան	300
Շրջանաւարտ տիար Ռաֆֆի Աբոշեան	200
Նախկին սան տիար Յակոբ Խաչատուրեան	100

ՄԱՀԱԵ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑՈՎ

Լիբանանի դպրոցներու HEKSի յատկացում 2900

ՈՐԲ. ՎԱՐՈՒԺ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱԳ-ի Ընկերային Յանձնախումբ 100

ՀԱԳ ԱՐԱ ՊԱԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ

Տիկ. Սոսի Պալեանի ապաքինման առիթով

Տիկ. Սոսի Պալեան եւ պր. Արմէն Պալեան	200
Տղոք. Արման եւ դոկտ. Արաքս Գրիգորեան	100
Տէր եւ տիկ. Ալեք եւ Շողակ Պալեան	100
Օրդ.ներ Արշակունիի եւ Լուսին Տէր Խաչատուրեան	100


ՈՐԲ. ՏՈՆԱԼՏ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարագաշեան ընտանիք	100
ՀԱԳ Ենոկական մարմին	100
ՀԱԳ Տիկ. օժանդակ մարմին	100
ՀԱԳ անձնակազմ	100
Վեր. եւ տիկ. Նշան Պազալեան	50
Վեր. եւ տիկ. Հրայր Զոլազեան	30
Դոկտ. եւ տիկ. Արմէն Իրնէշլեան	50
Տէր եւ տիկ. Ֆրէտի Էքմէքճի	20
Տիկիններ Թենի եւ Իրմա Հասըրճեան	20
Տէր եւ տիկ. Հրանդ եւ Փաթիլ Խտրլարեան եւ Արման	20
Տէր եւ տիկ. Արի Գազանճեան	20
Տէր եւ տիկ. Ուիսամ եւ Վերա Հատտատ	20
Տիկ. Անիթա Թորոյեան-Ֆինան	20
Լեւոն Պապիկեանի բարեկամներ	20
ՀԱԳ-ի ընկերային յանձնախումբ	3.000.000 լ.ն
Տիկ. Ռոզի Սայիլեան-Պրէթ	500.000 լ.ն
Տիկ. Նուհա Զիւլալ	500.000 լ.ն
Մի Ոմս	100.000 լ.ն

ՆՈՐ ՏԱՐՈՒԿՅ ԱՌԹԻ

Ենոք Թանիս Սմեա 1500







100%

Յաջողութիւն

Շնորհատրութիւն Լիբ. Պաքալորեային յաջողած մեր աշակերտներուն

Սիթիա Օհանեան
Տանա ապու Հժէյլի՝ լաւ
Լէա Արժիսեան
Նարեկ Քէօշկերեան

Վեցցէ ք

100%
ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ
2016-ԷՆ Ի ՎԵՐ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A_E_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College